

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 184

Մեղքի դէմ պատերազմ – Եկեղեցու պատմութեան ընթացքում այդ թիրիմացութիւնը որ ֆիզիքական աշխարհը բնականաբար չար է եւ թէ հաւատացեալի հոգին բարի է իսկ մարմինը վատ պատճառ է դարձել որ բազմաթիւ խմբեր արտադրեն հակասուրբգրային վարդապետութիւններ ու գործադրութիւններ: Հետեւաբար շատեր իրենց ետ են քաշել աշխարհից, ապրելով միայնակ կեանքեր՝ ինչպէս տեսնում ենք վանական շարժումներում. զսպելով իրենց սովորական ֆիզիքական հաճոյքներից, ստանձնելով անձնուրացման տարբեր ձեւեր, նոյնիսկ ինքնախարազանման եւ այլ ծայրայեղ խստակեաց սովորութիւններ: Այսպէս մարդիկ կատարում են այնպիսի բաներ որպէսզի պայքարել աշխարհի դէմ, նաճել մարմինը, եւ ապրել սուրբ կեանքեր: Նման գաղափարներ եւ գործելակերպեր գտնում են Յունական փիլիսոփայութեան եւ աշխարհային կրօնների մէջ, բայց տեղ չունեն Աստուածաշնչում: Սրանք նորութիւններ չեն քանի որ Պօղոսը պիտի ընդդիմաներ նման կեղծ ուսուցումներին տարածուած կեղծ ուսուցիչներից (Ա. Տիմոթէոս 4:1-6):

Չար աշխարհի կարգադրութեան վերաբերեալ, Յիսուսը ասեց որ թէկուզ մենք որպէս հաւատացեալներ այլեւ չենք պատկանում այս աշխարհին, սակայն մենք դեռ մնում ենք աշխարհքումը (Յովհաննէս 17:14-16): Տիտոս 2:11-12ում Պօղոսը կոչում է հաւատացեալներին որ ուրանան աշխարհային ցանկութիւնները եւ ապրեն բարեպաշտ կեանքեր: Աստուած չի փրկում մեզ եւ ապա կանչում որ անջատուենք աշխարհից: Փոխարէն, թէպէտ մենք կոչուած ենք որ չհետեւենք աշխարհի անաստուած ճանապարհները եւ չզիջել (չմեղմացնել) աւետիսը, սակայն մենք միեւնոյն ժամանակ կոչուած ենք լինել աշխարհքում, պաշտպանել հաւատքը, զբաղել մշակոյթում, լինել աշխարհի աղն ու լոյսը, եւ հասնել անհաւատացեալներին աւետարանի ճշմարտութիւնով (Մատթէոս 5:13-16, Ա. Պետրոս 3:15):

Դեւի վերաբերեալ, Աստուածաշունչը սովորեցնում է որ նա իրական է, զօրաւոր ու վայրագ (Ա. Պետրոս 5:8). խորամանկ ու խաբուսիկ (Բ. Կորնթացիս 11:14). եւ թէ նա է այս չար աշխարհի իշխանը (Յովհաննէս 14:30): Սակայն, Աստուածաշունչը նաեւ սովորեցնում է որ Սատանան մի արարած է եւ հունաւոր, եւ թէպէտ նա աւելի զօրաւոր է քան թէ մարդ արարածներ, բայց եւ այնպէս նա ամենագոր չի. եւ թէպէտ նա ունի աւելի գիտութիւն քան թէ մարդ արարածներ, բայց եւ այնպէս նա ամենագէտ չի. ոչ էլ ամենուրեք: Առաւել, նա մի պարտուած թշնամի է (Մատթէոս 12:28-29, Կողոսացիս 2:15):

Ուրեմն, Սատանան Աստուծոյ հաւասար մի հակառակորդ չի, ինչպէս ոմանք են կարծում. փոխարէն, նա Աստուծոյ արարածն է ու Նրան ենթակայ: Ինչպէս Մարտին Լութերն է ասել՝ «Դեւը Աստուծոյ Դեւն է»: Ինչպէս բոլոր երկրորդական պատճառներ, Աստուած օգտագործում է դեւին որպէսզի իրականացնի Իր բարի նպատակները (Հռովմայեցիս 8:28): Սատանան ու դեւերը կարող են անել ոչինչ Աստուծոյ հրովարտակից դուրս (Եփեսացիս 1:11): Թէկուզ հարկ է Սատանային լուրջ առնել, սակայն որպէս հաւատացեալներ մենք չպիտի վախենալ նրանից: Հակառակ որոշ Քրիստոնէական ուսուցումներին ու գործադրութիւններին, թէպէտ Սատանան ու նրա դեւերը կարող են փորձել, նեղացնել, խանգարել, ու յարձակել հաւատացեալներին (Բ. Կորնթացիս 12:7, Ա. Թեսաղոնիկեցիս 2:18), սակայն նրանք որոնք վերածնուել են Աստուծոց ունեն իրենց մէջ ներբնակող Սուրբ Հոգուն (Ա. Կորնթացիս 3:16, 6:19), եւ երբէք չեն կարող դիւստարուել (Ա. Յովհաննէս 4:4): Փոխարէն, Աստուածաշունչը սովորեցնում է թէ մենք որ Քրիստոսում ենք, Սուրբ Հոգու զօրութեամբ, հիմնաւորուած ու վարժուած Աստուծոյ Խօսքով, կկարողանանք ճանաչել չարը, դիմադրել Սատանային, ու յաղթանակել նրան (Եփեսացիս 6:10-18, Յակոբոս 4:7, Ա. Պետրոս 5:8-10):

Ամեն տեսակի մեթոդներ ու բանաձեւեր են առաջարկել որպէսզի Քրիստոնէաներ կարողանան պայքարել չար աշխարհի կարգի ու դեւի դէմ, բայց արանցից մեծ մասը աննկատում են մի շատ կարեւոր կէտ: Դրանք չեն հասկանում որ նոյնիսկ եթէ մենք կարողանայինք առանձնանալ աշխարհի ու դեւի նեղութիւններից ու փորձանքներից, մեր ամենամեծ թշնամին դեռ պիտի լինէր մեզ հետ՝ այնինչ որը պատճառում է մեր մեղանչելը՝ այսինքն, մեր մէջ գտնուող պղծութիւնն ու չար ցանկութիւնները՝ մնացած մեղաւոր բնոյթը, որը ազդում է մեր հոգին, միտքը, կամքը, սիրտը, եւ մարմինը՝ որը թշնամական ու զօրաւոր է, եւ մեր հետ է ամբողջ ժամանակ եւ ուր էլ որ գնանք (Կողոսացիս 2:21-23):

Մարկոս 7:21-23ում Յիսուսը մատնանշում է ներքին ընկած բնութիւնը որպէս մեղքի աղբիւրը՝ մեղսալի խորհուրդներ, խօսքեր ու գործեր: Յակոբոսը ասում է նոյն բանը Յակոբոս 1:14-15ում: Առանցի այս գաղափարի ուղիղ հասկանալը որ բոլոր մեղք սկսում է ներսից, բոլոր տրուած լուծումները իրականում ծանձաղ արագ պատասխաններ են, որոնք չեն կարող հայթայթել այնինչ որ դրանք խոստանում են, եւ դրանց վախճանն է աւելի մեծ շփոթութիւն, անյաջողութիւն, եւ յուսահատութիւն տառապող Քրիստոնէայի համար:

Ուրեմն ո՞րն է աստուածաշնչային պատասխանը թէ ինչպէս պիտի վարենք մեր մնացած մեղաւոր բնութեան հետ: Աստուածաշունչը տալիս է մեզ մեղքի պայքարի ու սրբութեան աճման մի երկու-մասանի պատասխան (Հռովմայեցիս 6:13): Յաջող դասում աւելի խորը կ' թափանցենք, նկատի առնելով հաւատացեալի կեանքում եղած յառաջադիմական սրբագործութեան երկու մասերը: